

## Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ո Ի Թ Ի Ի Ն

7) Ա. Ա. ԱՆՍՏՐՈՆՆԵՍՆ. Պատկերներ (վերջին տաճկահայոց կեանքից).  
հրատարակեց Վառվառէ Բանանեան. Մոսկուա. 1900 թ., 338 էրես,  
գինը 1 ռ.:

Պ. Ա. Ահարոնեանը մեր այն երիտասարդ գրողներից է, որ հէնց իր առաջին պատմուածքներով իր վրայ դարձրեց մեր, դժբախտաբար, սակաւաթիւ ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը:

Ապրելով թիւրքաց և ռուսաց Հայաստանի սահմանի վրայ (Իգդիր), հեղինակը ականատես էր այն քստմենլի իրականութիւն, որ այնքան ճշգրիտ ու ցայտուն դուրս է բերում նրա տաղանդաւոր գրիչը: Մենք տեսնում ենք այդ սահմանի միւս կողմում մի երկիր, ուր ապրում են տարբեր աշխարհայեցողութիւն, տարբեր կուլտուրա ու տարբեր հակումներ ունեցող ցեղեր: Այդ ցեղերը կարող էին խաղաղ ապրել իրար կողքի և իւրաքանչիւրը իր բնական ընդունակութիւններին համապատասխան ապրուստ ձարել, ինչպէս այդ կատարւում է սահմանի այս կողմում, ուր նոյն հայ, քիւրդ և թիւրք տարրերը, օրէնքի և արդարադատութեան հովանու տակ, նուիրուած են իրանց զբաղմունքներին, առանց որ մէկը գառան դեր ստանձնի, իսկ միւսը՝ գայլի: Մինչդեռ սահմանի միւս կողմում այդ նոյն տարրերը, վատթար կառավարութեան և արդարադատութեան կատարեալ բացակայութեան շնորհիւ, ստիպուած են յարմարուել գոյութեան կուռի այն ձևին, երբ մէկը ստանձնում է կրաւորական, իրաւազուրկ մի մասսայի դեր, իսկ միւսը դառնում է արիւնհարբու մի գազան: Չը կան այդ երկրում ոչ միայն վայրագութիւնը ամբողջ հասարակական կարգեր, քաղաքացիական անհրաժեշտ հաստատութիւններ, այլ նոյն իսկ մի շար կամք դիտմամբ աւելի ևս դժոխային է կացուցանում տիրող իրակաւնութիւնը, ներմուծելով ատելութիւն և ֆանատիկոսութիւն: Բաղաքական անմիտ նպատակներով աւազակաբարոյ և գազան

մի տարր յարուցանուով է մի թշուառ, անդէն և անպաշտպան հօտի վրայ: Եւ ահա այդ շար կամքի շնորհիւ մի ամբողջ շէն երկիր մասնուով է նախածրագրուած ասպատակութեան, աւերումների և սրածութեան: Ամբողջ գիւղեր, իրանց խաղաղ, հեզ և աշխատասէր բնակիչներով ենթարկուով են քիւրդ վայրագ ցեղերի անլուր խժգժութիւններին: Թշնամու սրից կամ վաւաշտ գրկից ճողոպրածը, ահից խելագուրկ եղած, թողնուով է իր պապերի արիւն քրտինքով ողողած դաշտերն ու փախչում, փախչում սահմանի միւս կողմը, իր կեանքը ազատելու: Եւ այս տեղ տանջուած փախստականը տեսնուով է իր եղբայրներին, որոնք օրէնքի հովանու տակ, խաղաղ ապրում են իր դժբախտ «վաթանի» ցեղակից քրդերի և տաճիկների հետ կողք կողքի: Որովհետև դայլաւարոյ քրդերն ու Ֆանատիկոս թիւրքերն այդտեղ սանձահարուած են և ստիպուած են թողնել իրանց հակահասարակական բնազդները: Այդ երկրում մեր տկոր ու քաղցած փախստականները տեսնուով են իրանց աւելի բախտաւոր եղբայրներին: Բայց դրանք արդէն մոռացել են իրանց մօտիկ անցեալը և կոպիտ անտարբերութեամբ հրում են այդ դժբախտացած ու ակամայ մուրացկաններին...

Պ. Ահարոնեանի տասը պատմուածքները, որոնցից առաջին անգամ է լոյս տեսնուով միայն «Նորածինը», առանձին գրքոյկի մէջ ամփոփելով հրատարակելը միջոց է տալիս ընթերցողին ծանօթանալ հեղինակի տաղանդի հետ: Անկասկած Ահարոնեան ունի ստեղծագործական ոյժ, նա բանաստեղծ է, և հայրենի բնութիւնը իր զաւակներով պատկերանում են նրա ընթերցողի առաջ կենդանի, ինչպէս իրականութիւնը: Հեղինակի զգացմունքները և տրամադրութիւնները վարակուով են ընթերցողին, և նա անտարբեր չէ կարող թերթել արիւն արցունքով գրուած էջերը: Վատ չէր լինի, եթէ մեր անասնացած բուրժուազիան (չը բաժանեւք և ինտելիգենտներին), որ կեանքի նպատակ է դրել ոսկի դիզել, ապա այդ ոսկով փառաւոր պալատներ կանգնեցնել և շուայ կօմֆօրտի մէջ տպրել ի փառս իր ստամոքսի և յագուրդ իր կեղտոտ կըրքերի—վատ չէր լինի, ասում ենք, եթէ իր պարտալ ժամերին փորձէր կարգալ այդ «պատկերները», և մի քիչ էլ մոռանար իր աստուածացրած մարմինը: Բայց... մենք հաւատացած ենք, որ պ. Ահարոնեանի պատմուածքներն անգամ չեն շարժիլ այդ դասակարգի հետաքրքրութիւնը, որովհետև մեր բուրժուան անզգայ է դէպի ամենը, ինչ որ անմիջապէս շահ կամ վայելք չէ նրա համար: Պէտք է նրա դուռը բաղխել, աղերսել, համոզել նրան, որ հասարակական որ և է ձեռնարկութեան նա բարեհաճի օգնել: Ինքնաբերաբար նա չի էլ հետաքրքրուով գրականու-

Թեամբ, որ իմանայ թէ ինչ պահանջներ կան: Նոյնը կը լինի և այս գէպքում, ուստի հրատարկչուհու համակրելի որոշումը — այս գրքի վաճառումից գոյացած արդիւնքը յատկացնել որբերին — պէտք է գրդի դարձեալ մեր սակաւաթիւ ընթերցող դասին՝ հնարաւորութիւն տալ որ այդ որոշումը արագ իրագործուի: Գիրքը այնքան մաքուր և գեղեցիկ է հրատարակուած, որ ոչ միայն իր բովանդակութեամբ, այլ և արտաքինով կարող է ամեն մի տան գրադարանի դարդ լինել:

Լ. Ս.

Յ) Յուգակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի ի կարին: Կազմեց Հր. Աճառեան. Վիեննա, 1900: Մեծադիր IX+37 էր., գինն է 1,50 ֆր.:

Հայերէն ձեռագիրները ցրուած են զանազան աշխարհներում, գիտական հաստատութիւններին, վանքերի գրադարաններում և մասնաւոր անձանց մօտ: Նրանց թիւը չէ կարելի նոյնիսկ մօտաւորապէս հաշուել, բայց ինչ որ յայտնի է՝ 7000-ից աւելի է: Բայց այս թիւը, եթէ նաև վրան աւելացնենք 2—3000 անյայտ ձեռագիր, մասնաւոր անձանց մօտ՝ այնու ամենայնիւ ճիշտ հասկացողութիւն չէ տալիս հայոց գրական հարստութեան մասին այն հազարամեայ շրջանում, երբ տպագրութիւնը դեռ հնարուած կամ տարածուած չէր և գրական աշխատանքները ձեռքով արտագրուում և իբրև ձեռագիր տարածուում էին ընթերցող շրջաններում: Գիրք ասելով՝ մենք ներկայումս հասկանում ենք մի ամբողջացած աշխատութիւն. մի գիրքը մի նիւթ է պարունակում: Ուրիշ բան է ձեռագիրը: Շատ յաճախ մի ձեռագիրը — մի ամբողջ մատենադարան է, տասը-քսան և աւելի առանձին աշխատութիւններ ամփոփուած են մի կազմի մէջ և կազմում են մի ձեռագիր: Մի որևէ ճառընտիր պարունակում է հարիւրաւոր ճառեր, զանազան հեղինակների և ժամանակների գործ՝ զանազան նիւթերի մասին: Մի պատմական ձեռագիր՝ մի ամբողջ շարք հայ պատմագիրների, մեծ մասամբ ժամանակագրական կարգով դասաւորուած: Մի «ոսկեփորիկ» ինչ տեսակ նիւթեր ասես չէ պարունակում — առակներ, պատմուածքներ, բժշկական խորհուրդներ, հմայութիւններ, ոտանաւորներ, սրամտութիւններ և այլն: Այնպէս որ, եթէ յայտնի և անյայտ հայերէն ձեռագիրների թիւը ընդունենք նոյնիսկ հաւատար տասն հազարի՝ այնու ամենայնիւ իսկական գրքերի, առանձին աշխա-